

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ (ARPIS) և ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑԱՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ (www.e-cadastre.am) ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԳՀԾՁԲ-20/26**

ք. Երևան

15 սեպտեմբերի 2020 թ.

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Ա. Թովմասյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բեսթ Սոֆթ» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Մարգարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (Arpis) և էլեկտրոնային ծառայությունների մատուցանող հարթակում (www.e-cadastre.am) կատարվող փոփոխությունների իրականացման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 18950000 (տասնութ միլիոն ինը հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 64 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար _____ Ա. Թովմայան
(ստորագրություն)



«ԲԵՍԹ ՍՈՖՏ» ՓԲԸ
Հասցեն՝ ք.Երևան, Չարենցի 1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 1570004845660100
ՀՎՀՀ 01568139

տնօրեն _____ Ն. Սարգսյան
(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
հ/հ	հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ ղասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդամենը գինը/ՀՀ դրամ	մատուցման		
						ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1		48981300/4		դրամ	18950000	1		Պայմանագրի հաշվառման պահից սկսած երեսուներորս ժամկետ

Գնման առարկայի

Տեխնիկական բնութագիրը

h/h	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (Arpis) և Էլեկտրոնային ծառայությունների մատուցան հարթակում (www.e-cadastre.am) կատարվող փոփոխությունների տեխնիկական պահանջները:	<p>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</p> <p>1.1. Սույն բնութագրով սահմանվում են Կադաստրի կոմիտեի անշարժ գույքի տեղեկատվական համակարգում (ARPIS) և Էլեկտրոնային ծառայությունների մատուցան հարթակում (www.e-cadastre.am) կատարվող փոփոխությունների տեխնիկական պահանջները:</p> <p>1.2. Էլեկտրոնային համակարգերում ծրագրային փոփոխություններն ու լրացումները պետք է նախագծվեն՝ հաշվի առնելով այդ համակարգի ճարտարապետությունը և աշխատանքի սկզբունքները:</p> <p>1.3. Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է Պատվիրատուին տրամադրվեն որպես համակարգի ծրագրային ապահովման ընդլայնումներ /extensions/:</p> <p>1.4. Կատարողը պետք է ապահովի սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծրագրային փոփոխությունների մատչելի աշխատակազմի վերապատրաստում:</p> <p>1.5. Ծրագրային փոփոխությունների և լրացումների մշակման և հանձնման համար Կատարողը կներկայացնի հետևյալ փաստաթղթերը, որոնք կհաստատվեն Պատվիրատուի կողմից.</p> <ul style="list-style-type: none"> • փոփոխությունների և լրացումների նկարագիրը • ծրագրային կոդերը (source codes) • օգտագործողի ձեռնարկ

2. ՉԱՓԱԳՐՈՂ ՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՑԱՑՎՈՂ ՏՎՅԱԼՆԵՐ ՄՈՒՏՔԱԳՐՄԱՆ ՆՈՐ


ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

- 2.1. www.e-cadastre.am կայքում «Հափագրում» ներդիրներով՝ «Հափագրման նյութեր»՝ «Հափագրման ձևաթղթեր»: Ներդիրները պետք է տեսանելի լինեն միայն կայքում չափագրող նշված օգտատերի համար:
- 2.2. «Հափագրման նյութեր» ներդիրում պետք է տեսանելի լինեն ներկայումս «Հափագրում» էջում առկա տվյալները:
- 2.3. «Հափագրման ձևաթղթեր» ներդիրը կազմակերպել չափագրման ձևաթղթերը ներբեռնելու հնարավորությամբ (Նկար 1):

Նկար 1

Ստեղծել հնարավորություն չափագրման տվյալների մուտքագրման համապատասխան ձևաթուղթը (միավորում, բաժանում) ընտրելու, այնուհետև չափագրման թղթի ֆորմատը (A1, A2, A3, A4) ու ներբեռնել ձևաթղթի DWG տարբերակը հետագայում լրացնելու և հարթակ վերբեռնելու համար (Նկար 2): www.e-cadastre.am կայքի կառավարման հարթակի միջոցով ավելացնելու հնարավորություն: Վերսկի աջ անկյունում նշել շարժումների թարմացման ամսաթիվը: Ներքևի աջ մասում հղում՝ «Ներբեռնել բոլորը»:

Նկար 2




Նկար 3

- 5. Պարհիայի կառուցման նյութ
- 6. Կառուցվածքի տեսակ
- 7. Շենքի տեսակ
- 8. Հարկ
- 9. Ավարտվածության աստիճան
- 10. Կնասվածության աստիճան
- 11. Շենքի օգտագործման նպատակ

Շենքերի և կառուցվածքների տվյալների մուտքագրումից հետո ավտոմատ կերպով պետք է ձևավորվի շինության բնութագիրը (կցված Հավելված 1-ում նկարագրված ձևով):
 Հավելված 1-ում նշված չափագրողների տվյալները և ամփա ամսաթիվը պետք է լրացվեն ավտոմատ կերպով՝ օգտագործելով չափագրողի մուտքագրման տվյալները:

«Չափագրման տվյալների ավելացում» հատվածում ստեղծել հնարավորություն հողամասի վերաբերյալ տվյալների մուտքագրման համար, ինչպես նաև մինչև ավարտելը մուտքագրված տվյալների խմբագրման (Նկար 7-ում ներկայացված մուտքագրման դաշտերով):



Մուտքագրման տվյալները ևս պետք է սինխրոնիզացվեն ARPIS-ի հետևյալ դասակարգիչների հետ՝

- 1. Հողամասի նպատակային նշանակություն
- 2. Հողատեսք կամ գործառնական նշանակություն

Մուտքագրված տվյալները ավտոմատ կերպով պետք է լրացվեն ARPIS համակարգի դիմումների մշակման գործառնությունների այն փուլում, երբ աշխատանք է կատարում հաշվառման տվյալների մուտքագրողը՝ իրենց համապատասխան դաշտերում:

Մուտքագրողը պետք է ստուգի չափագրման տվյալները, ապա ընտրի 2 հնարավոր տարբերակներից մեկը՝ «Հաստատել» կամ «Կասեցնել»: Կասեցնելու դեպքում ստեղծել նշումներ մուտքագրելու դաշտ և ստեղծել կասեցման տեսակն ընտրելու հնարավորություն՝ «չափագրման սխալ», «այլ սխալ»:

Ծրագրի օժանդակ մատուցում հողամասի տվյալները մուտքագրելիս պետք է լրացվի հողամասի ծածկագիրը, որը տվյալ պահին նշված է կադաստրային քարտեզում (անկախ այն հանգամանքից՝ չափագրվել է տվյալ ծածկագրով հողամասն ամբողջությամբ, թե տվյալ հողամասի մի մասը, կամ կատարվում է հողամասի բաժանում), հողամասի մակերեսը, նպատակային, գործառնական նշանակությունները՝ տարանջատելով հողամասի տեսակները ըստ սեփականության իրավունքի (սեփական, ընդհանուր բաժնային, ընդհանուր համատեղ):

Ծրագրի օժանդակ մատուցելու շնորհիվ ստեղծված շնորհակալությունների տվյալները մուտքագրելիս պետք է լրացվի շնորհակալության ծածկագիրը (հաշվի առնելով հողամասի կադաստրային քարտեզի տվյալները, և հողամասի հատակագծում նշված շնորհակալության հերթական համարը, իսկ բազմաբնակարան շենքի բնակարանի և շենքի մասի պարագայում նաև ծածկագրի ենթակողը), շնորհությունների նպատակային և գործառնական նշանակությունները և բնութագրող տվյալները՝ բնութագրող աղյուսակի տվյալների համաձայն:

Կադաստրի կոմիտե քաղաքացու կողմից դիմում ներկայացնելու և ծրագրի օժանդակ մասի ակտիվացումից հետո, տվյալները ստուգվում են հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի քարտեզի մասնագետների կողմից, որտեղ ստուգվում են ներկայացված հողամասի հատակագծի տվյալները: Դրական արդյունքից հետո, ճշտվում է հողամասի և շնորհությունների ծածկագրերը (անհրաժեշտության դեպքում տրվում են նոր ծածկագրեր) և տրվում է եզրակացություն: Բացասական եզրակացության դեպքում հողամասի ծածկագրի փոփոխություն չի կատարվում և տրվում է համապատասխան եզրակացություն՝ թերությունների վերաբերյալ:

Հաշվառման տվյալների մուտքագրման բաժնի տվյալները մուտքագրող մասնագետների կողմից ստուգվում են ներկայացված շնորհությունների հատակագծերի և ծրագրի օժանդակ մատուցման մուտքագրված տվյալները, դրական եզրակացության դեպքում կատարում է ծրագրի օժանդակ մատուցող հողամասի և շնորհությունների ծածկագրերի համապատասխանեցում քարտեզի մասնագետի կողմից տրված ծածկագրին, նշում է հողամասի և շնորհությունների գնահատման համապատասխան գույները (ցանկալի է գնահատման գույները նշվեն ավտոմատ ծրագրի կողմից կադաստրային քարտեզում հասցեի տեղադիրքի համաձայն), որից հետո կատարում է հողամասի և շնորհակալության տվյալների ներբեռնում ծրագրի օժանդակ մասից գործող ծրագրի մեջ: Ցանկալի է, որ ծրագիրը հնարավորություն ունենա ներբեռնման ժամանակ փոխել ինչպես գործող ծրագրում մուտքագրված շնորհությունների ամբողջական մակերեսը, այնպես էլ շնորհությունների հարկերի մակերեսները առանձին (ուչ ամբողջական չափագրություն ներկայացնելու պարագայում՝ միայն փոփոխման ենթարկված հարկի հատակագիծ ներկայացնելու դեպքում), ինչպես նաև ներբեռնել նոր ստեղծված շնորհությունների տվյալները նոր ծածկագրերով:

Մուտքագրող մասնագետը պետք է ունենա հնարավորություն շնորհությունների տվյալները նոր ստեղծված կադաստրային գործ ներբեռնել արխիվացված կամ դեռ գործող մայր կադաստրային գործերից, որի անհրաժեշտությունը կլինի գույքերի միավորման ժամանակ, երբ չեն ներկայացվում միավորված գույքի չափագրության փաթեթ, կամ բաժանման դեպքում, երբ ներկայացվում է միայն բաժանված հողակտորների հատակագծերը, իսկ հողամասում առկա շնորհությունների հատակագծերը չեն ներկայացվում:

Բացասական եզրակացության դեպքում մասնագետի կողմից տրվում է համապատասխան

եզրակացություն:

Կասեցումից առաջ ռեգիստրին հնարավորություն տալ, որպեսզի կասեցումը հաստատելուց առաջ նշի թե՛ արդյոք կասեցման պատճառների մեջ կա այնպիսի թերություն, որը ենթադրում է, որ չափագրողը պետք է փոփոխի կամ շտկի չափագրման տվյալները:

Կասեցման դեպքում նշել հետևյալ պատճառներից որևէ մեկը, կամ մի քանիսը՝

1. կոորդինատային կետերի սխալ որակավորված անձի կողմից թույլ տված սխալ,
2. շինությունների հատակգծերում թույլ տված սխալ,
3. շինությունների բնութագրերում թույլ տված սխալ,
4. կադաստրային գործում առկա փաստաթղթերի և որակավորված անձի կողմից ներկայացված փաթեթի նախամատաստախանություն:

Նկար 9


Չափագրման ծածկագիր
Կարգավիճակ
Անտաքիվ
Գույքի հասցին
Կցված ֆայլեր

20250327
Հաստատված
Օգոստոս 7, 2020 12:10:53
Երևան, Աջափնյակ Հարստրան փողոց 65/4 շինություն

Պետական գրանցման ներկայացման գործի կարգավիճակից կախված Նկար 9-ում պատկերված «Կարգավիճակ» դաշտի կողքը պետք է հայտնվեն Նկար 10-ում պատկերված նշանները:

Եթե նշված է «Կասեցված», ապա թույլ տա պատճենելով բոլոր մուտքագրված փաստաթղթերը ու տվյալները և ստեղծել նոր հայտ՝ խմբագրման հնարավորությամբ:

Նկար 10



2.5. www.e-cadastre.am կայքում ստեղծել «Չափագրման տվյալների դիտում» վերնագրով էջ, որտեղ չափագրման ծածկագիրը մուտքագրելու դեպքում ցույց կտա այդ գործի բոլոր ֆայլերը, որոնք վերբեռնել է չափագրողը՝ ծածկագիր, անսաթիվ, կից ֆայլերը (Նկար 8):

Նկար 8



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԳՐԱՆՈՒՄԻ



ԿԱՌԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Տարիական զեկազմ

3. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԻ 2 ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱԹԵԹԻ ՄՇԱԿՄԱՆ

3.1. 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու ՀՀ հարկային օրենսգրքի 11-րդ՝ «Անշարժ գույքի հարկը» բաժինը, համաձայն որի՝ անշարժ գույքի հարկով հարկվան բազա են համարվելու «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով գնահատված հողամասերի (բացառությամբ գյուղատնտեսական հողերի) և (կամ) դրանց բարելավումների շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքները: ՀՀ հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածում կատարված փոփոխություններով սահմանվել են նաև անշարժ գույքի հարկի նոր դրույթաչափերը:

Անշարժ գույքի հարկ վճարողներ համարվող կազմակերպություններին ու ֆիզիկական անձանց անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքների և դրանից հաշվարկվող անշարժ գույքի հարկի չափի իրազեկմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում մշակելու ծրագրային փաթեթ, որը հնարավորություն կնձեռի ֆիզիկական անձանց կողմից անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի համարի կամ անշարժ գույքի կադաստրային ծածկագրի մուտքագրմամբ, առցանց ինքնաշխատ եղանակով, տեղեկանալու անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքի և դրանից հաշվարկվող անշարժ գույքի հարկի չափի վերաբերյալ (2021-ից 2026 թվականների համար):

Ծրագիրը պետք է համաժամանակյա ռեժիմով կապված լինի ARPIS էլեկտրոնային համակարգին, ըստ մուտքագրված վկայականի համարի կամ կադաստրային ծածկագրի էլեկտրոնային համակարգից որոնի համապատասխան գույքային միավորը և կայքէջի համապատասխան պատուհանում ներբեռնի անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը, դրանից համապատասխան դրույթաչափերով հաշվարկված անշարժ գույքի հարկը, ինչպես նաև անհրաժեշտ այլ տվյալներ:

ընտրված է «Բազմաբնակարան շենքի ծավալում», ապա կադաստրային ծածկագրի հարևանումը պետք է լինի կադաստրային ծածկագրի բոլոր 6 նիշերի մատվ, հակառակ դեպքում՝ 5 նիշերի մատվ: Եթե գույքային միավորում «Շենք» և «Կառուցվածք» մուտքագրված չէ, ապա նույնականացումը իրականացվում է ըստ «Տողամասեր» բաժնում մուտքագրված հողամասի կադաստրային ծածկագրի՝ ծածկագրի 4 նիշի մատվ: Եթե գույքային միավորում մուտքագրված է միայն հողամաս (հողամասեր)՝ «Նպտ. Նշանակություն» դաշտից ընտրված միայն «Գյուղատնտեսական» արժեքով, ապա այս դեպքերում «Փնտրել» կոճակի ակտիվացումից հետո՝ չնայած այն հանգամանքին, որ էլեկտրոնային համակարգից նույնականացվում է տվյալ միավորը, այդ պատուհանի ներքևամասում կատարվում է հետևյալ գրառումը՝

«Նշված վկայականի համարով կամ կադաստրային ծածկագրով անշարժ գույքը հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողամաս»:

Ծանոթություն՝ ըստ կադաստրային ծածկագրի որոնման դեպքում ծածկագրի լրացման դաշտը պետք է բաղկացած լինի 6 վանդակներից, ընդ որում առջին վանդակում պետք է լրացվի 2 թվային նիշ, երկրորդում՝ 3, երրորդում և չորրորդում՝ 4, հինգերորդում և վեցերորդում՝ 3:

Հակառակ դեպքում՝ ըստ վկայականի համարի կամ կադաստրային ծածկագրի ARPI հեկտորոնային համակարգից համապատասխան գույքային միավորը նույնականացնելուց հետո («Փնտրել» դաշտի ակտիվացումից հետո) բացվում է վերջնական տվյալների դիտման հետևյալ պատուհանը՝

Անշարժ գույքի հասցեն՝	_____
Անշարժ գույքի տեսակը՝	_____
Անշարժ գույքի շուկայական արժեքին մուտքագրված կադաստրային արժեքը (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2021 թ-ի համար՝ 25%-ի հաշվարկով (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2022 թ-ի համար՝ 30%-ի հաշվարկով (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2023 թ-ի համար՝ 35%-ի հաշվարկով (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2024 թ-ի համար՝ 50%-ի հաշվարկով (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2025 թ-ի համար՝ 75%-ի հաշվարկով (<< դրամ)	_____
Անշարժ գույքի հարկը 2026 թ-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<< դրամ)	_____

«Անշարժ գույքի հասցեն» գրառմանը կից լրացվում է տվյալ գույքային միավորի հասցեն, հետևյալ կերպ՝ մարզը, համայնքը (Երևանում՝ վարչական շրջանը), փողոցը, շենքը և շինությունը: Օրինակ՝ Երևան, Կենտրոն վարչական շրջան, Ամրոյան փողոց, 10, 15 կամ Մարզ Կոտայք, ք. Աբովյան, Կենտրոնական փողոց, 5, 56/1:

«Անշարժ գույքի տեսակը» գրառմանը կից դաշտում լրացվում է անշարժ գույքի տեսակը հետևյալ կերպ՝ եթե գույքային միավորի մեջ «Շենք» և «Կառուցվածք» մուտքագրված չէ, ինչպես նաև այն դեպքերում, երբ միավորի մեջ մուտքագրված է միայն «Կառուցվածք» միայն պարիսպ (պարիսպներ) և

(կամ) հարթակ (հարթակներ) տեսակներով, ապա լրացվում է «Չկատուցապատված հողամաս» գրառումը:

Հակառակ դեպքում՝ եթե «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշանակություն» դաշտից ընտրված է «Հասարակական» արժեքը, ապա լրացվում է «Հասարակական շինություն» գրառումը, եթե ընտրված է «Արտադրական» արժեքը՝ լրացվում է «Արտադրական շինություն» գրառումը:

Եթե «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Բնակելի» արժեքը և «Շենքեր» ենթաբաժնում բոլոր շենքերի տեսակը ընտրված է «այլ» և շենքեր բաժնում մուտքագրված է միայն շենք (շենքեր) «Օգտագործման նպատակ» դաշտից ընտրված «Ավտոտնակ» կամ «Ավտոկայանատեղի/հանգրվան» կամ «Ստորգետնյա ավտոտնակ» արժեքներով, ապա լրացվում է «Ավտոտնակ» գրառումը, առնվազն մեկ շենքի համար «Օգտագործման նպատակ» դաշտից ընտրված «Այգետնակ» կամ «Ամառանոց» արժեքների ընտրման դեպքում լրացվում է «Այգետնակ» գրառումը, բոլոր մյուս դեպքերում՝ լրացվում է «Բնակելի տուն» գրառումը:

Եթե «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Բնակելի» արժեքը և «Շենքեր» բաժնում առնվազն 1 շենքի տեսակը ընտրված է «բազմաբնակարան շենքի ծավալում», ապա «Օգտագործման նպատակ» դաշտից առնվազն 1 շենքի համար «Բնակարան» կամ «Ջերմահարկ» կամ «Մանսարդ» կամ «Բնակարան և ձեղնահարկ» կամ «Կառուցվող բազմաբնակարան շենքի բնակարան» կամ «Վերնաարահ» ընտրված արժեքի դեպքում լրացվում է «Բնակարան», եթե առնվազն 1 շենք ընտրված է «Բազմաբնակարան բնակելի շենք» կամ «Կառուցվող բազմաբնակարան շենք» կամ «Հանրակացարան» ապա լրացվում է՝ «Բազմաբնակարան բնակելի շենք», եթե մուտքագրված է շենք (շենքեր), որոնց բոլորի համար արժեքը ընտրված է ցանկից որպես «Ավտոտնակ» կամ «Ավտոկայանատեղի/հանգրվան» կամ «Ստորգետնյա ավտոտնակ» ապա լրացվում է «Ավտոտնակ», մնացած բոլոր դեպքերում լրացվում է «Ոչ բնակելի տարածք»:

Եթե միավորի համար «Շենքեր» բաժնում շենք մուտքագրված չէ, սակայն «Կառուցվածքներ» բաժնում մուտքագրված է կառուցվածք (կառուցվածքներ)՝ բացառությամբ «պարիսպ» և (կամ) «հարթակ» կառուցվածքի տեսակների (այս դեպքում անշարժ գույքի տեսակը հանդիսանում էր «չկառուցապատված հողամաս»), ապա եթե «Շենքի նպտ. նշն.» դաշտից ընտրված է «Հասարակական», ապա լրացվում է «Հասարակական շինություն», եթե ընտրված է «Արտադրական», ապա լրացվում է՝ «Արտադրական շինություն», իսկ եթե «Բնակելի» ապա լրացվում է «Բնակելի տուն»:

«Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» գրառմանը կից լրացվում է տվյալ միավորի համար ARPIS էլեկտրոնային համակարգի «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Անշարժ գույքի շուկայականին մոտարկված Կ. Ա.» դաշտի արժեքը (թվային գրառումը),

ստորակետով տարանջատված հազարերորդական մասերով, օրինակ՝ 57,504,632:

«Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (ՀՀ դրամ)» գրառմանը կից լրացվում է անշարժ գույքի հարկի չափը՝ արտահայտված թվային տեսքով, որը հաշվարկվում է եղնելով «Անշարժ գույքի տեսակը» և «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտերում գրառված արժեքների, հետևյալ կերպ.

«Անշարժ գույքի տեսակը» դաշտին կից գրառված «Չկատուցապատված հողամաս» արժեքի համար տվյալ գույքային միավորի համար «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված «արդյունաբերության, ընդերօգտագործման և այլ արտադրական նշանակության» արժեքի դեպքում՝ «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,0025,

տվյալ գույքային միավորի համար «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված «Էներգետիկայի, տրանսպորտի, կայի, կամուսյալ ենթակառուցվածքների օբյեկտների» արժեքի դեպքում՝ «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,005,

տվյալ գույքային միավորի համար «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված «բնակավայրերի» և միաժամանակ «Գն կամ հողատեսք» դաշտից ընտրված «բնակելի կառուցապատման» արժեքների դեպքում՝ «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,006,

«Չկատուցապատված հողամաս» դաշտի մնացած բոլոր դեպքերում՝ «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,01:

«Անշարժ գույքի տեսակը» դաշտին կից գրառված «Ակտունակ» արժեքի դեպքում՝ «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,002, «Արտադրական շինություն» արժեքի դեպքում՝ 0,0025, «Հասարակական շինություն» արժեքի դեպքում՝ 0,003:

«Անշարժ գույքի տեսակը» դաշտին կից գրառված «Բազմաբնակարան բնակելի շենք», «Բնակարան» և «Ոչ բնակելի տարածք» արժեքների դեպքում, եթե «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը մեծ է 0 և փոքր կամ հավասար է 10,000,000 (0<X<=10,000,000), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,0005,

Եթե մեծ է 10,000,000 և փոքր կամ հավասար է 25,000,000 (10,000,000<X<=25,000,000), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից

հանվում է 10,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,001 և դրան գումարվում է 5,000:
 Եթե մեծ է 25,000,000 և փոքր կամ հավասար է 47,000,000 ($25,000,000 < X \leq 47,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 25,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,002 և դրան գումարվում է 20,000:
 Եթե մեծ է 47,000,000 և փոքր կամ հավասար է 75,000,000 ($47,000,000 < X \leq 75,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 47,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,004 և դրան գումարվում է 64,000:
 Եթե մեծ է 75,000,000 և փոքր կամ հավասար է 100,000,000 ($75,000,000 < X \leq 100,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 75,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,006 և դրան գումարվում է 176,000:
 Եթե մեծ է 100,000,000 և փոքր կամ հավասար է 200,000,000 ($100,000,000 < X \leq 200,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 100,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,01 և դրան գումարվում է 326,000:
 Եթե մեծ է 200,000,000 ($200,000,000 < X$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 200,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,015 և դրան գումարվում է 1,326,000:
 «Անշարժ գույքի տեսակը՝ դաշտին կից գրասկան «Բնակելի տուն» և «Այգետնակ» արժեքների դեպքում, եթե «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը մեծ է 0 և փոքր կամ հավասար է 7,000,000 ($0 < X \leq 7,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքը բազմապատկվում է 0,0005,
 Եթե մեծ է 7,000,000 և փոքր կամ հավասար է 23,000,000 ($7,000,000 < X \leq 23,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 7,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,001 և դրան գումարվում է 3,500:
 Եթե մեծ է 23,000,000 և փոքր կամ հավասար է 50,000,000 ($23,000,000 < X \leq 50,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 23,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,002 և դրան գումարվում է 19,500:
 Եթե մեծ է 50,000,000 և փոքր կամ հավասար է 85,000,000 ($50,000,000 < X \leq 85,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (ՀՀ դրամ)» դաշտի արժեքից հանվում է 50,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,004 և դրան գումարվում է

73,500:

Եթե մեծ է 85,000,000 և փոքր կամ հավասար է 120,000,000 ($85,000,000 < X \leq 120,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (<Հ դրամ>» դաշտի արժեքից հանվում է 85,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,006 և դրան գումարվում է 213,500:

Եթե մեծ է 120,000,000 և փոքր կամ հավասար է 200,000,000 ($120,000,000 < X \leq 200,000,000$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (<Հ դրամ>» դաշտի արժեքից հանվում է 120,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,01 և դրան գումարվում է 423,500:

Եթե մեծ է 200,000,000 ($200,000,000 < X$), ապա «Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը (<Հ դրամ>» դաշտի արժեքից հանվում է 200,000,000, ստացված արդյունքը բազմապատկվում է 0,015 և դրան գումարվում է 1,223,500:

«Անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար՝ 25%-ի հաշվարկով (<Հ դրամ>» գրառմանը կից լրացվում է «Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<Հ դրամ>» արժեքի և 0,25-ի արտադրյալը:

«Անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար՝ 30%-ի հաշվարկով (<Հ դրամ>» գրառմանը կից լրացվում է «Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<Հ դրամ>» արժեքի և 0,3-ի արտադրյալը:

«Անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար՝ 35%-ի հաշվարկով (<Հ դրամ>» գրառմանը կից լրացվում է «Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<Հ դրամ>» արժեքի և 0,35-ի արտադրյալը:

«Անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար՝ 50%-ի հաշվարկով (<Հ դրամ>» գրառմանը կից լրացվում է «Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<Հ դրամ>» արժեքի և 0,5-ի արտադրյալը:

«Անշարժ գույքի հարկը 2021 թ.-ի համար՝ 75%-ի հաշվարկով (<Հ դրամ>» գրառմանը կից լրացվում է «Անշարժ գույքի հարկը 2026 թ.-ի համար՝ 100%-ի հաշվարկով (<Հ դրամ>» արժեքի և 0,75-ի արտադրյալը:

Ծրագիրը պետք է ապահովի նաև հետադարձ կապի հնարավորություն, որը պետք է իրականացվի «Հարցերի դեպքում թողեք Ձեր հարորդագրությունը» կոճակի ակտիվացմամբ: Այն պետք է ակտիվանա միայն այն դեպքում երբ մուտքագրվել է վկայականի համար կամ կադաստրային ծածկագիր (սկզբնական մուտք գործած պատուհանում այն պետք է լինի պասիվ, քանի դեռ չի մուտքագրվել վկայականի համար կամ կադաստրային ծածկագիր՝ անկախ գույքի որոնման դրական արդյունքի): Նշված կոճակի ակտիվացմամբ պետք է բացվի տվյալների լրացման հետյալ ձևաչափով պատուհանը՝

Անուն, ազգանուն

Հեռախոսահամար

Էլ. Փոստ

Հաղորդագրություն

Ուղարկել

Անուն, ազգանուն դաշտում օգտատերը լրացնում է իր անուն, ազգանունը, հեռախոսախամար և էլ. Փոստ դաշտերում համապատասխանաբար իր հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, հաղորդագրություն դաշտում լրացնում է համապատասխան հարցադրումը և ուղարկել կոճակի ակտիվացմամբ այդ հորրդագրությունը՝ օգտատիրոջ կողմից լրացված նաև այնու տվյալների հետ միասին ռհասցեագրվում է hakob.hovhannisyan@cadastre.am էլեկտրոնային փոստի հասցեին:

4. ՀԱՍՑԵՆԵՐԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՌԵՆՏՏՐԻ ԻՆՔՆԱՇԽԱՏ

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

4.1. Գույքի հասցեավորման կամ փոփոցների անվանափոխման ընթացակարգ:

«Էլեկտրոնային ծառայությունների մատուցման հարթակ»-ի (այսուհետ՝ Հարթակ) մասի «Հասցեներ» բաժնում (այսուհետ՝ բաժին) ավելացնել հետևյալ կոճակները (Նկար 1)

- Նոր հասցեի հայտ,
- Փորոցի անվանափոխման կամ ավելացման հայտ,
- Համայնքի քարտեզ,
- Հայտեր:

Նկար 1

1) “Նոր հասցեի հայտ” կոճակի ակտիվացումից հետո նոր պատուհանում պետք է լինեն հետևյալ գործիքները (Նկար 2)՝

- Նոր առաջացող հասցեի հայտ,
- Առկա հասցեի փոփոխության հայտ,
- Գույքի բաժանում կամ միավորումից առաջացող հասցեի հայտ՝:

Նկար 2

I. “Նոր առաջացող հասցեի հայտ” կոճակի ակտիվացումից հետո պատուհանում պետք է լինեն պարտադիր լրացման հետևյալ դաշտերը՝

- «Բնակավայր», select list,
- «Փողոց», select list,
- «Փոստային դասիչ», select list,
- «Առաջարկվող համար», text input, (allow only numeric, “/” “-”);

ԷԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ԾՆԱԽՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐՁԱՆԷ

Հարցերի կոմիտեի
ՀԱՎԵՆՎԱԾ 6

Քննվալիցը *

Փողոցի անաչարկվող անվանում *

Քաղաքի անվանում *

Փաստաթղթերի կոճ (pdf, jpeg) *

Հարցեր

Շնորհակալություն

Մուտքագրված հայտն ուղարկվում է Կադաստրի կոմիտեի կամայական կառուցվածքային ստորաբաժանում ուսումնասիրման համար: Տրվում է Բանալի (Նկար 6): Նկարում * -ով նշվածները պարտադիր լրացնան դաշտեր են:

- II. «Փողոցի նոր անվանման հայտ» կրճակի ակտիվացումից հետո պատուհանում պետք է լինեն լրացման հետևյալ դաշտերը՝
- «Բնակավայր», select list,
 - «Փողոցի առաջարկվող անվանում», select list,
 - «Քաղաքնեզ», multiple files upload (PDF, JPG),
 - «Փաստաթղթեր», multiple files upload (PDF, JPG),
 - «Ուղարկել», submit:

ռեժիմով արտահանելու Կադաստրի կոմիտեի կողմից իրականացված գործարքների արդյունքում անշարժ գույքի սեփականատերերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները՝ գույքային մեկ միավորի կտրվածքով, համայնքի (Երևանում վարչական շրջանի) կամ բնակավայրի կտրվածքով, ինչպես նաև մարզի (Երևանի) կտրվածքով:

Ծրագրային փաթեթը հնարավորություն պետք է ընձեռի նաև համապատասխան տեղեկությունները արտահանելու նաև համապատասխան գործարքի արդյունքում փոփոխված սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունները նաև տվյալ գործարքից հետո՝ պահպանելով տվյալ գործարքի պահի նկատմամբ բոլոր տվյալները:

5.2. Ընդհանուր բնութագիրը.

ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի N 388-Ն որոշմամբ սահմանված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ անշարժ գույքի սեփականատերերի փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրվում են N 2 ձևին համապատասխան (Ձև N 2, կցվում է): Սույն որոշման կարգով սահմանվել է նաև

Ձև N 2-ի լրացման կարգը:

Ձև N 2-ը (այսուհետ՝ Հաշվետվություն) բաղկացած է 41 լրացման ենթակա սյունակներից՝ համարակալված 1-ից մինչև 41:

ARPIՏ էլեկտրոնային համակարգում Հաշվետվությունը տեղադրել «Ընդհանուր հաշվետվություններ» բաժնում՝ հաջորդիվ այդ բաժնում առկա հաշվետվությունների՝ «Անշարժ գույքի սեփականատերերի փոփոխություն» անվանմամբ:

Սույն հաշվետվության մեջ ընդգրկվում են այն գույքային միավորների տվյալները, որոնց համար ARPIՏ էլեկտրոնային համակարգի «Գործարքներ» բաժնից ընտրված են գործարքների հետևյալ տեսակները՝ «Փոխանակում», «Առուվաճառք», «Նվիրատվություն», «Ժառանգություն», «Օտարման այլ տեսակներ», «Դատարանի վճռի հիման վրա գույքի օտարում»:

Ծանոթություն՝ գույքային միավորի կազմում ընդգրկված յուրաքանչյուր հողամաս, որի համար հողամասեր բաժնի «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված կլինի «Գյուղատնտեսական» արժեքը, հանդես է գալիս որպես մեկ առանձին տողով լրացվող, մեկ առանձին գույքային միավոր: Օրինակ՝ եթե միավորի մեջ մուտքագրված է երեք հողամաս, որից 2-ի համար հողամասերի բաժնի «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված է «Գյուղատնտեսական» արժեքը, իսկ 3-րդի համար՝ «Բնակավայրերի» արժեքը, ապա հաշվետվությունում տվյալ գույքային միավորը պետք է հանդես գա երեք առանձին լրացվող տողերով՝ երեք առանձին գույքային միավորների տեսքով, որոնցից 2-րդ պետք է վերաբերեն գյուղատնտեսական հողերին, իսկ 1-ը բնակավայրերի հողերին: Այլ կերպ ասած, եթե միավորի մեջ հողամասեր բաժնում «Նպատ. նշանակություն» դաշտից «Գյուղատնտեսական» արժեք

ընտրված չէ, բոլոր դեպքերում տվյալ գույքային միավորը հանդես է գալիս որպես 1 առանձին տողով լրացվող միավոր, միավորի կազմում ցանկացած «Գյուղատնտեսական» արժեքով հողամաս առաջացնում է առանձին միավորի տեսքով, առանձին տողով լրացվող գույքային միավոր:

Հաշվետվությունը լրացվում է հետևյալ կերպ՝

1-ին սյունակում լրացվում է առանձին տողով լրացվող գույքային միավորի հերթական համարը:

2-րդ սյունակում լրացվում է տվյալ գույքային միավորի արխիվային ծածկագիրը:

3-րդ սյունակում լրացվում է տվյալ գույքային միավորի բանալին:

4-ից 13-րդ սյունակներում, հաջորդիվ ըստ տողերի՝ կապված սուբյեկտների քանակից, լրացվում է գործարքի ժամանակ մուտքագրված նոր սուբյեկտի (սուբյեկտների)՝ Հաշվետվության մեջ անշարժ գույքի նոր սեփականատիրոջ (համանեփականատիրոջ) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նոր մշտական օգտագործողի տվյալները, հետևյալ կերպ.

4-ից 8-րդ սյունակներում, ըստ տողերի հաջորդիվ կապված սուբյեկտների քանակից, լրացվում է գործարքի ժամանակ շենքին (շենքերին) դրա բացակայության դեպքում կառուցվածքին (կառուցվածքներին) կցված «սեփականություն» կամ «ընդհանուր բաժնային սեփականություն» և կամ «ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «կառուցապատողի իրավունք կամ ինքնակամ շինություններ» իրավունքին կցված (նշված հրավումքների համարության դեպքում նախապատվությունը տրվում է ըստ հերթականության նշված իրավունքի տեսակի), շենքի և կառուցվածքի բացակայության դեպքում հողամասին կցված «սեփականություն» կամ «ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «անհատույց օգտագործում»՝ պետական հողամաս տեսակով իրավունքին կցված (դրանց համարության դեպքում նախապատվությունը տրվում է ըստ հերթական նշված իրավունքի տեսակի) նոր մուտքագրված սուբյեկտի (սուբյեկտների) տվյալները:

Եթե միավորի մեջ մուտքագրված է հողամաս, որի համար հողամասեր բաժնում «Նպատ. նշանակություն» դաշտից ընտրված է «Գյուղատնտեսական» արժեքը, որը ինչպես նշեցինք վերը հանդես էր գալիս առանձին տողով լրացվող առանձին գույքային միավոր, ապա տվյալ դեպքերում Հաշվետվության 4-ից 13-րդ սյունակների լրացման համար հաշվի են առնվում տվյալ գյուղատնտեսական հողամասին կցված «սեփականություն» կամ «ընդհանուր համատեղ սեփականություն» կամ «ընդհանուր բաժնային սեփականություն» կամ «անհատույց օգտագործում»՝ պետական հողամաս տեսակով իրավունքին գործարքի ժամանակ նոր կցված սուբյեկտի (սուբյեկտների) տվյալները: Նշված պայմաններին բավարարող իրավունքի տեսակը պայմանականորեն անվանենք **Zet**:

Գործարքի ժամանակ վերը նշված համապատասխան իրավունքին մուտքագրված նոր սուբյեկտի

(սուբյեկտների)՝ ֆիզիկական անձի դեպքում հաշվառման (գրանցման), կազմակերպության դեպքում գտնվելու վայրի՝

4-րդ պունակում լրացվում է նարզը (բառերով);

5-րդ պունակում՝ համայնքը, Երևան քաղաքում վարչական շրջանը (բառերով);

6-րդ պունակում՝ փողոցը, նրբանցքը, փակուղին և այլն;

7-րդ պունակում՝ շենք/տունը (համարը);

8-րդ պունակում՝ բնակարանը (համարը);

Եթե «Նորք» տեղեկատվական համակարգում սուբյեկտի 4-ից 8-րդ պունակներին համապատասխանող տվյալները լրացված են մեկ տողում և հնարավոր չէ այն արտահանել ըստ համապատասխան լրացման պունակների, այսպե՛ս դեպքերում ամբողջական այդ տվյալը անհրաժեշտ է լրացնել 4-րդ պունակում՝ 5-ից 8-րդ պունակները թողնելով դատարկ:

9-րդ պունակում լրացվում է ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը;

10-րդ պունակում՝ ֆիզիկական անձի անունը;

11-րդ պունակում՝ ֆիզիկական անձի հայրանունը;

12-րդ պունակում՝ ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը;

13-րդ պունակում՝ ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն:

Ծանոթություն՝ Հաշվետվության մեջ լրացվող գույքային միավորի համար կախված սուբյեկտների քանակից, եթե 9-րդ պունակում ըստ տողերի լրացվել է 1-ից ավելի սուբյեկտներ, ապա Հաշվետվության տվյալ միավորի 1-ին, 2-րդ և 3-րդ պունակներին համապատասխան հերթական համարը, արևիվային ծածկագիրը և միավորի բանալին նույնությամբ հաջորդիվ կրկնվում են բոլոր սուբյեկտների համապատասխան տողերում:

14-ից 18-րդ պունակներում լրացվում է գործարքի արդյունքում համապատասխան վերջին դարպած իրավունքին կցված, որի արդյունքում առաջացել է **Zet իրավունքը**, սուբյեկտի (սուբյեկտների)՝ հաշվետվության մեջ նախկին սեփականատիրոջ (համասեփականատիրոջ) կամ պետական սեփականություն հանդիսացող հողի նախկին մշտական օգտագործողի տվյալները՝

14-րդ պունակում լրացվում է ֆիզիկական անձի ազգանունը կամ կազմակերպության անվանումը;

15-րդ պունակում՝ ֆիզիկական անձի անունը;

16-րդ պունակում՝ ֆիզիկական անձի հայրանունը;

17-րդ պունակում՝ ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը կամ կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման համարը;

18-րդ սյունակում՝ Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը կամ կազմակերպության ՀՎՀՀ-ն:

Ծանոթություն՝ համապատասխան դադարած իրավունքի սուբյեկտների քանակը 1-ից ավելի լինելու դեպքում 14-ից 18-րդ սյունակները յուրաքանչյուր սուբյեկտի համար լրացվում են հաջորդիվ ըստ տողերի:

Անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի վերաբերյալ 19-ից 21-րդ սյունակները լրացվում են հետևյալ կերպ.

19-րդ սյունակում լրացվում է «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Միավորի հասցե» մասից՝ «ՆԱՕ անվանում»-ը հետո 1 պորբել «Ենթա ՆԱՕ անվանում»-ը հետո մեկ պորբել և եթե «Նկարագրություն» մասում արված է գրառում փակագծերի մեջ ներառել այդ գրառումը (եթե գրառում կատարված չէ «Ենթա ՆԱՕ անվանում»-ից հետո ոչինչ չի լրացվում),

20-րդ սյունակում լրացվում է «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Միավորի հասցե» մասի «Շենք» մասում լրացված արժեքը,

21-րդ սյունակում լրացվում է «Ընդհանուր նկարագիր» բաժնի «Միավորի հասցե» մասի «Շինություն» մասում լրացված արժեքը:

Ծանոթություն՝ 9-րդ սյունակում 1-ից ավելի սուբյեկտների առկայության դեպքում մինչև անշարժ գույքի գտնվելու վայրի հասցեի վերաբերյալ 19-ից 21-րդ սյունակները առաջին համասեփականատիրոջ տվյալներին հաջորդիվ նոր տողերում չեն լրացվում:

Հողամասի տվյալների վերաբերյալ 22-ից 29-րդ սյունակները լրացվում են հետևյալ կերպ.

22-րդ սյունակում լրացվում է հողամասի կադաստրային ծածկագիրը: Եթե տվյալ միավորի մեջ մուտքագրված կլինի 1-ից ավելի հողամաս (առանց հաշվի առնելու «Գյուղատնտեսական» արժեքով հողամասերը, օրինակ, եթե միավորի մեջ մուտքագրված է 2 գյուղատնտեսական հողամաս (ոչրանք հանդես էին գալիս առանձին տողերով լրացվող միավորներ) և 2 դրանից տարբեր արժեքնեով հողամասեր, ապա այս դեպքում դիտարկվում են 2 գյուղատնտեսականից տարբերվող այլ հողերը), ապա որպես հողամասի կադաստրային ծածկագիր լրացնել ավելի մեծ մակերես ունեցող հողամասի կադաստրային ծածկագիրը, իսկ հողամասերի չափերի հավասարության դեպքում լրացնել որևէ հողամասի կադաստրային ծածկագիրը՝ պատահականության սկզբունքով (գյուղատնտեսական արժեքով հողամասերի համար այս պայմանը չի կարող տարածվել, քանի որ միավորում մուտքագրված գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հողամաս (հողամասի մաս) մուտքագրվում էր որպես առանձին միավոր և այս դեպքերում հողամասի կադաստրային ծածկագիրը միակն է):

23-րդ սյունակում լրացվում է հողամասի նպատակային նշանակությունը, ընդ որում՝ «անշարժ գույքի միավորի նկարագիրը» բաժնի «Հողամասեր» ենթաբաժնի «Մասի տվյալներ» մասում ընտրված

«Գյուղատնտեսական» դեպքում նշվում է՝ «1», «բնակավայրերի» դեպքում՝ «2», «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական» դեպքում՝ «3», «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» դեպքում՝ «4», «հատուկ պահպանվող տարածքների» դեպքում՝ «5», «հատուկ նշանակության» դեպքում՝ «6», «անտառային» դեպքում՝ «7», «ջրային» դեպքում՝ «8», «պահուստային հողերի» դեպքում՝ «9»: Եթե տվյալ միավորի մեջ մուտքագրված կլինի 1-ից ավելի հողամաս, ապա որպես հողամասի նպատակային նշանակություն լրացնել ավելի մեծ մակերես ունեցող հողամասի նպատակային նշանակությունը (նույն պայմաններով՝ ինչ 22-րդ կետում), իսկ հողամասերի չափերի հավասարության դեպքում լրացվի որևէ հողամասի նպատակային նշանակությունը պատահականության սկզբունքով (գյուղատնտեսական արժեքով հողամասի վրա այն չի կարող տարածվել, քանի որ միավորում մուտքագրված գյուղատնտեսական նշանակության յուրաքանչյուր հողամաս (հողամասի մաս) մուտքագրվում էր որպես առանձին միավոր և այս դեպքերում հողամասի նպատակային նշանակությունը միակն է):

24-րդ պունակում լրացվում է 23-րդ պունակում լրացված հողամասի նպատակային նշանակությամբ համապատասխան հողամասի գործառնական նշանակությունը (հողատեսքը), ընդ որում՝ «Գյուղատնտեսական»-ի համար (23-րդ պունակում «1»-ը), եթե «Հողամասեր» բաժնի «Մասի տվյալնել» ենթաբաժնի «ԳՆ համ հողատեսք» ընտրման դաշտից ընտրվել է «վարելահող», ապա **ռոտզելի դաշտում նշագրումով** դեպքում՝ «1/1» հակառակ դեպքում՝ «1/2», «խաղողի» դեպքում՝ «1/3», «կորիզավորի» դեպքում՝ «1/4», «հնդավորի» դեպքում՝ «1/5», «խոտհարքների» դեպքում՝ «1/6», «արտավայրերի» դեպքում՝ «1/7», «այլ հողատեսքերի» դեպքում՝ «1/8»: Եթե «Հողամասեր» բաժնի «Մասի տվյալնել» ենթաբաժնի «ԳՆ համ հողատեսք» ընտրման դաշտից չի ընտրվել «վարելահող», «խաղող», «կորիզավոր», «հնդավոր», «խոտհարք», «արտավայր», «այլ հողատեսք» արժեքները այլ ընտրվել է այլ արժեք, ապա 24-րդ պունակում լրացվում է **«1»**:

«Բնակավայրերի»-ի համար (23-րդ պունակում «2»-ը) «բնակելի կառուցապատման» դեպքում նշվում է «2/1», «հասարակական կառուցապատման» դեպքում՝ «2/2», «խաղ կառուցապատման» դեպքում՝ «2/3», «ընդհանուր օգտագործման» դեպքում՝ «2/4», «այլ հողեր» դեպքում՝ «2/5»: Եթե նշված նպատակային նշանակությամբ համապատասխան չի ընտրվել նշված արժեքները, ապա 24-րդ պունակում լրացվում է՝ «2»:

